## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-ԻՆ ՍՏՈԿՀՈԼՄՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐ-ՁԱԲԱՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱ-ՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 2 փետրվարի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի փետրվարի 8-ին Ստոկհոլմում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Շվեդիայի Թագավորության կառավարության միջեւ ներդրումների խրախուսման եւ փոխադարձաբար պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կ. Ճշմարիտյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Շվեդիայի Թագավորության կառավարության միջեւ ներդրումների խրախուսման եւ փոխադարձաբար պաշտպանության մասին համաձայնագիրն ստորագրվել է 2006թ. փետրվարի 8-ին՝ Ստոկհոլմում:

Սույն համաձայնագրի նպատակը մասնակից պետությունների միջեւ տնտեսական համագործակցությունն ակտիվացնելն է, մի մասնակից պետության ներդրողների ներդրումների համար մյուս մասնակից պետության տարածքում արդար եւ հավասար պայմաններ ստեղծելը, ներդրումների խրախուսման եւ փոխադարձաբար պաշտպանության միջոցով ներդրումային նախաձեռնությունները խրախուսելը:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է.

- իր օտարերկրյա ներդրումների ոլորտի ընդհանուր քաղաքականության համաձայն խրախուսել իր տարածքում մյուս մասնակից պետության ներդրողների ներդրումները եւ ընդունել այդ ներդրումներն իր օրենսդրությանը համապատասխան,

- մյուս մասնակից պետության ներդրողի համար աշխատող անհատներին, ինչպես նաեւ նրանց ընտանիքների անդամներին թույլատրել մուտք գործել իր տարածք, մնալ երկրում եւ դուրս գալ այնտեղից իր տարածքում կատարված ներդրումների հետ կապված գործունեություն իրականացնելու նպատակով,

- մշտապես երաշխավորել արդար եւ հավասար ռեժիմ մյուս մասնակից պետության ներդրողների ներդրումների համար եւ անհիմն կամ խտրական միջոցներով չվնասել դրանց կառավարմանը, պահպանմանը, օգտագործմանը, տիրապետմանը կամ տնօրինմանը, ինչպես նաեւ ապրանքներ կամ ծառայու- թյուններ ձեռք բերելուն կամ ներդրողների արտադրանքը վաճառելուն,

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան կատարված ներդրումներին տրամադրել համաձայնագրով երաշխավորվող լիարժեք պաշտպանություն եւ չտրամադրել այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ է, քան այն ռեժիմն է, որը պահանջվում է միջազգային իրա- վունքով,

- ապահովել արդյունավետ միջոցներ համաձայնագրով նախատեսված ներդրումների հետ կապված պահանջների ապահովման եւ իրավունքների իրականացման համար,

- երաշխավորել, որպեսզի իր ընդհանուր կիրառման օրենքները, կանոն- ները, վարչական պրակտիկան, ընթացակարգերը եւ դատական որոշումները, որոնք վերաբերում են համաձայնագրով նախատեսված ներդրումներին կամ ազդում են դրանով նախատեսված ներդրումների վրա, արագ տպագրվեն կամ այլ ձեւով հանրությանը մատչելի դառնան,

- ներդրումից ստացված եկամուտներին տրամադրել նույն ռեժիմը եւ պաշտպանությունը, որը տրամադրվում է ներդրմանը,

- թույլատրել ներդրման հետ կապված վճարումների առանց ուշացման փոխանցումն ազատ փոխարկելի տարադրամով,

- կրել մասնակից պետությունների միջեւ համաձայնագրի մեկնաբան- ման կամ կիրառման հետ կապված վեճերի կարգավորման համար ստեղծված միջնորդ դատարանում իր նշանակած անդամի ծախսերը, միջնորդ դատավա- րության գործընթացներում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը, ինչպես նաեւ միջնորդ դատարանի նախագահի ծախսերի, ցանկացած այլ ծախսի մի մասը, քանի որ դրանք հավասարապես բաշխվում են մասնակից պետությունների միջեւ:

Համաձայնագրով նախատեսված են մասնակից պետությունների ներդրողների ներդրումների նկատմամբ ազգային եւ առավել բարենպաստման ռեժիմի տրամադրման, ներդրումների օտարման եւ դրա դիմաց համարժեք եւ արդյունավետ փոխհատուցում տրամադրելու կարգը եւ պայմանները: Մասնավորապես, համաձայնագիրը նախատեսում է նաեւ մասնակից պետության տարածքում պատերազմի կամ այլ զինված ընդհարման, արտակարգ իրավիճակների, խռովության կամ ապստամբության հետեւանքով մյուս մասնակից պետության ներդրողների ներդրումներին պատճառված վնասների փոխհատուցման կարգը եւ պայմանները:

Համաձայնագիրը սահմանում է մի մասնակից պետության եւ մյուս մասնակից պետության ներդրողի միջեւ ներդրման վերաբերյալ վեճերի, ինչպես նաեւ համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված՝ մասնակից պետությունների միջեւ վեճերի կարգավորման եւ լուծման կարգը, պայմանները, ազգային եւ միջազգային ինստիտուցիոնալ կառուցակարգերը:

Կողմերի իրավունքները եւ պարտականությունները կազմված են փոխադարձության սկզբունքի հիման վրա:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2006 թվականի փետրվարի 8-ին Ստոկհոլմում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Շվեդիայի Թագավորության կառավարության միջեւ ներդրումների խրախուսման եւ փոխադարձաբար պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2 փետրվարի 2007 թվականի
ՍԴՈ-676